Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀՀ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը.

Հակոբ Արշակյան

2. Զբաղեցրած պաշտոնը.

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարար

3. Գործուղման վայրը և ժամկետները.

Իրանի Իսլամական Հանրապետություն (Թեհրան), 2019թ. հուլիսի 17-19-ը:

4. Հրավիրող կողմը.

Իրանի Իսլամական Հանրապետության տեղեկատվության և կապի տեխնոլոգիաների նախարարություն:

5. Գործուղման նպատակը.

Մասնակցություն էլեկտրոնիկայի, համակարգիչների և էլեկտրոնային առևտրի թեմայով իրանական 25-րդ միջազգային ցուցահանդեսին (ELCOMP-2019):

6. Քննարկված թեմաները.

Նախարար Հակոբ Արշակյանը պաշտոնապես հրավիրվել է՝ մասնակցելու ս.թ. հուլիսի 17-19-ին Իրանի Իսլամական Հանրապետությունում տեղի ունեցած <<Իրանի թվային տնտեսություն. Տարածաշրջանային համագործակցության հեռանկարները>> խորագրով համաժողովին, որի շրջանակներում կազմակերպվել էին երկու խոշոր միջոցառումներ. էլեկտրոնիկայի, համակարգիչների և էլեկտրոնային առևտրի թեմայով իրանական 25-րդ միջազգային ցուցահանդեսը (ELECOMP-2019) և <<Smart Iran>> համաժողովը: Այցի ընթացքում ակնկալվող աշխատանքների դյուրացման նպատակով Նախարարին ուղեկցել է Նախարարի օգնական Արթուր Գրիգորյանը:

Հուլիսի 17-ին Իրանի գիտության և տեխնոլոգիայի գծով Փոխնախագահ Սուրենա Սատտարիի ուղեկցությամբ Նախարար Հ. Արշակյանը շրջայց է ունեցել Իրանի <<Իննովացիոն կենտրոնում>>, որտեղ Նախարարին և հյուրերին ներկայացվել են Իրանի տեխնոլոգիական արդյունաբերության ձեռքբերումները, իրականացվող ծրագրերը, աքսելերացիոն նախագծերի միջոցով ստարտափներին աջակցության մեխանիզմները և գրանցած հաջողությունները:

Նույն օրը տեղի է ունեցել ELECOMP-2019 տեխնոլոգիական միջազգային ցուցահանդեսի բացման պաշտոնական արարողությունը, որին ներկա է եղել Իրանի Իսլամական Հանրապետության նախագահ Հասան Ռոհանին: Բացման արարողությանն անմիջապես հաջորդել

է <<Smart Iran>> համաժողովին մեկնարկը, որտեղ բացման խոսքով հանդես է եկել Իրանի տեղեկատվության և կապի տեխնոլոգիաների նախարար Ազարի Ջահրոմին: Կոնֆերանսի ընթացքում անդրադարձ է եղել թվային տնտեսության ռազմավարության մշակման առաջնահերթությանը և անհրաժեշտությանը:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Հուլիսի 18-ին կայացել է Իրանի տեղեկատվության և կապի տեխնոլոգիաների նախարար Ազարի Ջահրոմի հետ Հ. Արշակյանի երկկողմ հանդիպումը, որի ժամանակ քննարկվել են հայ-իրանական տնտեսական և տեխնոլոգիական ոլորտներում համագործակցության լայն հնարավորությունները և առաջիկա ծրագրերը:

Օրակարգով երրորդ օրը նախատեսված էր հանդիպում Իրանում հայ համայնքի ներկայացուցիչների հետ: Հ. Արշակյանը հանդիպել է Թեհրանի հայոց թեմի թեմական խորհրդի նախագահի, Իրան-Հայաստան առևտրի պալատի նախագահի ու խորհրդի անդամների և համայնքային մարմնի ներկայացուցիչների, ինչպես նաև տեխնոլոգիական ոլորտի հայազգի մի շարք ներկայացուցիչների հետ:

Հանդիպման ընթացքում քննարկվել են բարձր տեխնոլոգիական ոլորտում ՀՀ կառավարության տեսլականը, նորաստեղծ նախարարության առաջնահերթությունները և իրականացվող ծրագրերը: Նախարարը հատկապես ընդգծել է Հայաստան-Սփյուռք կապերի խորացման ուղղությամբ ՀՀ կառավարության նոր մոտեցումները և առաջիկա ծրագրերը, մասնավորապես՝ ներկայացրել է <<Հայկական վիրտուալ կամուրջ>> ծրագիրը, որը հնարավորություն է տալու Հայաստանում գոյություն ունեցող և ստեղծվող ընկերություններին ուղիղ կապ ունենալ աշխարհի շուկաների հետ: Առանձնակի կարևորվել է հայկական սփյուռքի մտավոր ներուժի ներգրավումը հայկական բարձր տեխնոլոգիական ոլորտի զարգացման գործում:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Հուլիսի 18-ին Իրանի տեղեկատվության և կապի տեխնոլոգիաների նախարար Ազարի Ջահրոմիի հետ կայացած Հ. Արշակյանի երկկողմ հանդիպման արդյունքում Ա. Ջահրոմին պատրաստակամություն է հայտնել քննարկել համագործակցության հնարավոր տարբերակները և տեղեկացրել է, որ ընդունում է Տեղեկատվական տեխնոլոգիաների 23-րդ համաշխարհային համագումարի (WCIT-2019) շրջանակներում նախատեսվող նախարարական միջոցառումներին մասնակցելու վերաբերյալ Նախարար Հ. Արշակյանի պաշտոնական հրավերը:

9. Ստորագրությունը, ամսաթիվը.

Հակոբ Արշակյան 05.08.2019թ.